ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Հայկ Հարությունյանի՝ Մանիլա կատարած այցի մասին

ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ

Հայկ Հարությունյան

ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ

Մանիլա (Ֆիլիպինների Հանրապետություն)
2017թ. հունիսի 5-9-ը

ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

Ասիական զարգացման բանկ (ԱԶԲ)

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մասնակցություն Ասիայի մաքուր էներգետիկայի 12-րդ համաժողովին (ԱՄԷՖ)

ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

Միջոցառման հիմնական թեման մաքուր էներգետիկայի գլոբալ զարգացումներն էին: Կազմակերպված էին բազմաթիվ թեմատիկ քննարկումներ և դեբատներ: Միջոցառման օրակարգը կցվում է սույն հաշվետվությանը:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Ակտիվ մասնակցել եմ Հայաստանի էներգետիկ համակարգի համար արդիական քննարկումներին, ներկայացրել եմ մեր մոտեցումները և բոլոր ներդրումային ծրագրերը: Բազմաթիվ առանձին հանդիպումներ եմ ունեցել մասնավոր ընկերությունների հետ, որոնք հետաքրքրություն էին ներկայացրել Հայաստանում մաքուր էներգետիկայի ոլորտում ներդրում կատարելու ուղղությամբ:

Միաժամանակ առանձին հանդիպումներ եմ ունեցել միջոցառման հիմնական կազմակերպիչ և հրավիրող կողմ հանդիսացող Ասիական Զարգացման բանկի ներկայացուցիչների հետ՝ էներգետիկայի բաժնի տնօրեն Կլեո Կավավակիի, էներգետիկայի ավագ մասնագետ Տիանհուա Լուոի, ծրագրի վերլուծաբան Ագնես Դիամանտեի, էներգետիկայի ավագ մասնագետ Սինդի Տիանգոի, մասնավոր հատվածի ենթակառուցվածքների հետ գործառնությունների բաժնի տնօրեն Շանտանու Չակրաբորտիի:

Հանդիպումների ընթացքում քննարկվել է արդեն իսկ ԱԶԲ-ի կողմից Հայաստանում իրականացվող ծրագրերի ընթացքը և քննարկվել նոր հնարավոր համագործակցության եզրեր: Իմ կողմից շեշտվել է մասնավոր հատվածի ֆինանսավորման ակտիվացման

անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով ԱԶԲ-ի դրական փորձը այդ ուղղությամբ: Միաժամանակ, մանրամասն քննարկվել է արևային համակարգային կայաններ կառուցելու հայկական ծրագիրը և ԱԶԲ-ի հնարավոր մասնակցության ձևաչափերը: Նաև երկուստեք կարևորել ենք պետական մասնակցություն ունեցող էներգետիկ ընկերությունների ներդրումային ծրագրերի ֆինանսավորման հարցը՝ առանց պետական երաշխիք ապահովող վարկային միջոցների: Այս ենթատեքստում կարևորվել է այդ ընկերությունների կառավարչական կարողությունների գնահատական տալը և անհրաժեշտության դեպքում կորպորատիվ կառավարման բարեփոխումների ծրագիր մշակելու և այդ հարցում ԱԶԲ-ի կողմից տեխնիկական աջակցություն ստանալու հարցը:

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

12.06.2017թ.